

ՂԱԶԱՐ ՓԱՐԱՊԵՑՈՒ ԲԹՈՒՂԹ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆԱՄԱԿԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ղազար Փարպեցին մեկն է այն հայ մտավորականներից, որոնց բախտ է վիճակվել կրթվել անտիկ դասական մշակույթի կենտրոններում: Բացի այդ նա հրաշալի ծանոթ է եղել Վ դարի հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությանը, շփվել է ժամանակի հայ առաջավոր մտավորականության ներկայացուցիչների հետ՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից ու Սահակ Պարթևից մինչև Մովսես Խորենացի ու Դավիթ Անհաղթ, Գյուլտ կաթողիկոս ու Մամբրե Վերծանող, Աղան Արծրունի ու Վահան Մամիկոնյան: Նա հռչակվել է որպես մեծ ճարտասան:

Փարպեցու ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում «Թուղթ» առ Վահան Մամիկոնեան՝ դրվածքը՝ «Թուղթն» առաջին անգամ հրատարակել է Մկրտիչ Էմինը¹: Հայ բանասիրության մեջ Ղազարի «Թղթի» քննությունը մինչև օրս կատարվել է հիմնականում երկու ուղղություններով: Քննությունների առաջին խումբը վերաբերում է «Թղթի» զանազան կարգի բանասիրական ու բնագրագիտական հարցերին: Մ. Էմինը, Մ. Նալբանդյանը², Հ. Ավգերյանը³, Վանատուրյա «Թուղթը» գիտել են սոսկ իբրև պատմական փաստաթուղթ, և նրանց կատարած, ճիշտ է խիստ արժեքավոր ու կարևոր, մասնավոր բնագրային շտկումները բանասիրական քննություններից այն կողմ չեն անցել: Մ. Նալբանդյանի դիտողություններից առանձնապես արժեքավոր են այն հատվածները, որոնք վերաբերում են Սուրբ զրքի և առանձնապես Պողոս առաքյալի թղթերի ոճական միավորների փարպեցիական մշակումներին, ընդօրինակումներին:

Գիտնականների երկրորդ խումբը (Գր. Խալաթյան⁴, Մ. Աբեղյան⁵, Զ. Հարությունյան⁶) նպատակ է հետապնդել պարզել «Թղթի» ժանրային կապը ճարտասանական գրականության, գլխավորապես ճառագրության հետ նրա ունեցած ընդհանուր եզրերի տեսանկյունից: Սակայն այս դեպքում էլ շեշտը դրվել է գլխավորապես ճառագրության ժանրի հետ Ղազարի «Թղթի» հարաբերակցության պարզարանման վրա և անտեսվել է անտիկ ու քրիստոնեական մշակույթներում արտահայտություն զտած հատուկ տիպի ժանրային կառույցի՝ նամակագրության հետ «Թղթի» ունեցած ամենամանրակապն առաջնային կապի խնդիրը:

Մեր նպատակն է «Թուղթը» քննել իր ժանրային առանձնահատկությունների, նամակագրական ժանրի առաջադրած հրամայական պահանջների ու կանոնի դիրքերից: Ժանրային մոտեցումը ոչ թե հակադրվում, այլ իր հերթին, նպաստում է «Թղթի» պատմական, բովանդակային ու գաղափարական շերտերի շատ ավելի խորը և հանգամանակից քննությանը, այն օգնում է շատ փաստերի ճշգրտմանն ու ստուգմանը, քանի որ նամակագրական կանոնը հաճախ խիստ միանշանակ է ու կայուն, գործում է որոշակի գործառական ոլորտներում, իսկ արտահայտության պլանում առաջնորդվում է խիստ կայուն ու կանոնիկ արտահայտչամիջոցներով ու հատուկ մշակված նամակագրական ձևերով:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե «Թուղթը» զրված է անբունազրոսիկ ձևով. Փարպեցին պարզապես գրել է առել իր մտքերը և ցանկացել դրանց հաղորդակից դարձնել Վահան Մամիկոնյանին: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Թղթի» գրեթե յուրաքանչյուր պարբե-

¹ «Ղազարայ Փարպեցու թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին», Մոսկվա, 1853:

² Մ. Նալբանդյան, Եժժ, հ. 4, Երևան, 1983, էջ 303—369:

³ «Բաղմավեպ», 1909, № 2, էջ 59—66:

⁴ Նույն տեղում, № 6, էջ 248—254:

⁵ Գր. Խալաթյան, Ղազար Փարպեցի և գործք նորին, Մոսկվա, 1883:

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 3, Երևան, 1968, էջ 343—377:

⁷ Զ. Հարությունյան, Ղազար Փարպեցի, Երևան, 1962:

րությունը, անգամ արտահայտութիւնն ու բոլոր պատահականութիւնն չեն ասված, այլ իրենց վրա կրում են հատուկ ուսումնասիրության և խորապէս մշակված գրական կոլտուրայի կնիքը:

«Թուղթ առ Վահան Մամիկոնեանը» ժանրային առումով, ինչպես վերնագրից էլ երևում է, խուղթ է, նամակ, որպէսիք գրում էին անտիկ հեղինակներն ու քրիստոնեւոթյան առաջին ներկայացուցիչները, եկեղեցու պաշտոնական և սլ պաշտոնական հայրերն ու հեթանոս գործիչները, բյուզանդացիներն ու արեւելիները, լատինացիներն ու այլ մշակույթների ներկայացուցիչներ: Այսօր, երբ գրվում է համաքրիստոնեական մշակույթի հարցը, տարօրինակ կթվար ուսումնասիրութեան շառնել այս հուշարձանը հարեան քրիստոնեական մշակույթների հետ իր ունեցած աղբրանքի, դեպի այդ ավանդները միտվածութեան և, իհարկէ, հեղինակային անհատականութեան ու զուտ հայկական իրողութիւնների հետ կապված: Մանավանդ, որ «Թղթում» և նրա անանուն հեղինակի կողմից գրված «Ճառաշարանում» ուղղակի և անուղղակի ակնարկներ են արվում ժանրային այս կամ այն հատկանիշների և վերջիններիս ավանդական բնույթի վերաբերյալ: Վերջապէս, V դարի հայ մշակույթը հարուստ է նամակային գրականութեան փաստերով, այդ ավանդույթը գալիս է Աղաթանգեղոսի ու Բուզանդի, Խորենացու ու Եղիշեի պատմութիւններից: Հարկ է հիշատակել նաև V դարում եկեղեցու հայրերի թղթերի թարգմանութիւնները: Ղ. Փարպեցին իր ձեռքի տակ ունեւր այս ողջ նամակային ավանդույթը, և նրա հիմնական հատկանիշները օգտագործված են «Թղթում»:

Փարպեցու, որպէս նամակագրի, տեսական պատրաստվածութիւնը անուրանալի է: Հարց է սակայն, թե կոնկրետ ի՞նչ աղբյուրներ է ունեցել ձեռքի տակ իր «Թուղթը» շարագրելիս: Երդո՞ք նա սկզբնաղբյուրի ձևով ծանոթ է եղել անտիկ նամակի տեսաբաններ Արտեմոնի, Դեմետրիոսի, Պրակտի, Փիլոստրատոսի, Լիբանիոսի, Յուլիոս Վիկտորի նամակագրական ձեռնարկումներին կամ Բարսեղ Կեսարացու, Գր. Նազիազանցու և այլոց թղթերում նամակի տեսութեանը վերաբերող ակնարկներին: Բայց այն, որ Ղազարը հրաշալի սերտել է Նոր կտակարանի թղթերը, տեղյակ է եղել եկեղեցու հայրերի գրագրութիւններին, անմիտելի փաստ է: Այս ևն վկայում էրա վերահիշյալ աղբյուրներից կատարած բազմաթիւ վկայակոչումները ինչպէս «Թղթում», այնպէս էլ «Պատմութեան» առանձին հատվածներում: Ղ. Փարպեցին քաջ ծանոթ էր «Պիտոյից որբին», հավանաբար՝ նաև նրա աղբյուրները հանդիսացող Հերմոգենի, Լիբանիոսի, Ալֆրոնիոսի ճարտասանական գրվածքներին: Այդ է վկայում Ղազարին ճարտասան հռչակելու իրողութիւնը: Այս նամակը նաև գրական հուշարձան է, որովհետև հսկայական պատմամշակութային արժեք է ներկայանում, դուրս է նամակագիրների զուտ նեղ անձնական հետաքրքրութիւնների շրջանակներից, այդ իսկ պատճառով էլ կցվել է «Պատմութեան» վերջում և հրապարակվել: Այս և մի շարք ուրիշ հատկանիշների ամբողջութիւնը նկատի բռնելով՝ գերմանացի բյուզանդագետ Հերբերտ Հունդերը իրեն թույլ է տվել խմբավորել նմանատիպ նամակները «գրական մասնավոր նամակ» անվան տակ⁸:

Ինչպէս նշում է անտիկ և բյուզանդական նամակի խոշորագույն գիտակ Սիկուտրիսը, «նամակային ձևի ներմուծումով բոլոր գրութիւնների սահմանները ավելի ու ավելի են իրար խառնվում»⁹: Ժանրային փոխներթափանցումները դառնում են սովորական երևույթ և հաճախ էլ արհեստականորեն համահավասարեցվում են գրանցում եղած տարբերութիւնները: Այս առումով անհրաժեշտ է խոսել Փարպեցու «Թղթի» ժանրային անսխառնութեան, ավելի ճիշտ՝ մի շարք ժանրերի հատկանիշների համադրման մասին: Փարպեցու «Թղթում» իրար հետ կողք-կողքի գոյատևում են նամակի և ձագի, քարոզի և ներբողի հատկանիշները: «Թուղթը» իր տիպարանական հատկանիշներով ամենից մոտ է կանգնած գեռ անտիկ ճարտասանութեան մեջ մշակված գաւալարական-ինքնապաշտպանական ձագերի մի հատուկ բնագավառին, այն է՝ ապագացուցական ձագին: «Թղթի» բովանդակութիւնը գրեթե ամբողջապէս ընդհանրութեան եզրեր է ցուցաբերում ճառագրական ժանրի հատկանիշների հետ և բավարարում է այդ ժանրի առանձնահատուկ պահանջները, մյուս կողմից իր հիմնական գծերով, ներքին կառուցվածքով, արտաքին տիպարանութեամբ և նամակագրական հատկանիշների ամբողջութեամբ հետևում է անտիկ և մերձավորարեւելյան նամակագրութեան ավանդույթին: Ինչպէս է Փարպեցին կառուցում իր «Թուղթը», նամակագրութեան ձևական հատկանիշների ամբողջութիւնը ինչպէս է ծառայեցնում

⁸ H. H u n g e r, Die hochsprachliche profane Literatur der Byzantiner, Bd. 11, München, 1978, S. 206.

⁹ J. S y k u t r e s, Epistolographie, in: P. R E d. A W, Supplementband V, München, 1931, S. 187.

մի ամբողջ շարք բովանդակիր խնդիրների լուծմանը: «Թուղթը» սկսվում է բյուզանդական ավանդույթով դրված ճարտասանական մի շարք իրողություններով ծանրաբեռնված առաջաբանով, որն իր արմատներով դնում հասնում է մինչև անտիկ ճարտասանների ցուցումները՝ այն մասին, թե ինչպես պետք է սկսել խոսքն ընդհանրապես: Նրանք հիմնականում նկատի ունենին ճառը, և որ ամենակարևորն է տվյալ դեպքում մեզ համար՝ դատավարական-ապացուցական ճառը: «Թղթին» առաջաբան ասելով նկատի ունենք ոչ թե անանուն հեղինակի «Թղթին» կցած առաջաբան-ծանոթությունը, այլ բուն «Թղթին» այսպես կոչված թղթառաջը, որն իր տեսակի մեջ մի մուտք է, դուռ, որ ընթերցողին նախապատրաստում է խորանալու բուն տեքստի մեջ: Անտիկ և բյուզանդական մշակույթներում ընդունված է նմանատիպ առաջաբանները որակել *προοίμιον* բառով, որը «Պիտոլից գրքում» լուսանկարչորեն թարգմանված է «նախաշարի»¹⁰, և որին էլ հետեւելու ենք շարադրանքի ընթացքում: Արիստոտելի «Հետադարձական արվեստում» այն սահմանվում է հետևյալ կերպ. «Նախաշարի» խոսքի (ճառի) սկիզբն է, ինչպես որ բանաստեղծության մեջ նախաբանը և սրնգահարության մեջ նախերգանքը, դրանք բոլորը սկիզբներ են, որոնք ճանապարհ են նախապատրաստում հաջորդ մասերի համար»¹⁰:

Հետեւելով Արիստոտելին, Անաքսիմենեսը իր «Հետադարձական արվեստում» նախաշարի հիմնական հատկանիշները համարում է ունկնդիրների նախապատրաստությունը և ճառի բովանդակության պարզաբանումը: Անաքսիմենեսի սահմանումից Հ. Հունդերը դուրս է բերում այն երեք էական տարրերը, «որոնք,— նրա բառերով ասած,— պահպանվում են ավելի ուշ ջրջաններում մակաբերված նախաշարի սահմաններում, այն է՝ *εὐχολογία* (բարեհաճություն), *προσοχή* (ուշադրություն) և *εὐσεβεία* (ունկնդիրների ընկալունակություն, ըմբռնելու ունակություն)...

Ուշադրությանը և բարյացակամությանը լավագույնս կարելի է հասնել ջանադիր *θεραπευτικῶς* և կեղծավոր, շողոքորթ *(χολαγωγικῶς)* արտահայտությունների միջոցով»¹¹:

Ծթն ուշադրություն դարձնենք Փարպեցու «Թղթին» առաջին պարբերությանը (որը մենք որակում ենք նախաշարի), կտեսնենք, որ այստեղ գործ ունենք նախաշարի տրված այն սահմանման հետ, որի իրագործումը նկատելի է այս թղթի օրինակով: Փարպեցու մոտ հանդիպում ենք նախաշարի բոլոր եռամասնյա հատկանիշների ամբողջությանը (բարյացակամ վերաբերմունք, ընկալունակություն, ուշադրության ակնկալիք):

Նախաշարի տրված սահմանումների հիմնական մեխն այն է, որ այն նպատակ է հետապնդում ավելի համոզիչ դարձնել բանավոր կամ գրավոր խոսքը, որովհետև այն առանց նախաշարի կորցնում է իր համոզականությունը: Հունդերը իր գրքում բերում է նաև նախաշարի անհրաժեշտության ընդունման, կարելի է ասել, «միտական ապացույց», որ գրում է մի անանուն հեղինակ. «...հաճախ պետք է խուսափել նախաշարից: Դրա անհրաժեշտությունը միշտ չէ, որ զգացվում է: Երբ նյութի բովանդակությունը իր մեջ ոչինչ հուզական չի պարունակում, ապա՝ նախաշարի անհրաժեշտությունը չկա»¹²:

«Թղթին» նախաշարի դեպքում է հետապնդում է՝ ավելի ընդգծելու խոսքի հուզականությունն ու համոզականությունը: Փարպեցին նախաշարի դեպքում հիշում է ընթերցողի (Վահանի) ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե ինչպես եկեղեցու մեծ առաքյալ Պողոսը իր վրա լարողված նախանձավոր մարդկանց մեղադրանքները տանել չկարողանալով՝ խախտում է Քրիստոսի պատվիրանը և «անձամբ զանձին լաւութիւնս և զճգունս մեծամեծ պարծանօք դրեալ մի ըստ միոյն է ձարգեաց»¹³: Այստեղ տեսնում ենք նախաշարի սահմանման առաջին երկու կետերի զործառումը: Նախ, որ Փարպեցին Վահանի (ընթերցողի) ուշադրությունը հրավիրում է Պողոսի՝ կարծես օրինազանց արարքի վրա, ցույց տալով, թե ինչ գնահատականի արժանացավ նրա այդ արարքը աստծու կողմից (և ոչ իմն ըստգտեալ խոտեցաւ, այլ կաց մնաց ի նմին առաքելութեան պայծառապես» 409) և թե ինչպես աստված Պողոսին ներեց, չդատապարտեց: Դրանով Ղազարը հիշում է իր կողմը շահել Վահանի բարյացակամությունը (բարեհաճությունը), սա էլ սահմանման երկրորդ կետն է: Այնուհետև Փարպեցին գործադրում է նախաշարի սահման-

¹⁰ Aristotle, The "Art" of Rhetoric (1414 b), London, 1959, p. 426.

¹¹ H. H u n g e r, Proömlion, Elemente der byzantinischen Kaiseridee in den Ar-
engen der Urkunden, in: WBS, Bd. I, Wien, 1964, s. 21.

¹² Նույն տեղում, էջ 23:

¹³ «Դ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո յ Պ ա տ մ ո թ ի ն Հ ա յ ո ց և թ ու ղ թ ա ո Վ ա հ ա ն Մ ա մ ի կ ո -
ն ե ա ն ծ, Թ ի ֆ ի ս, 1907, էջ 409 (այսուհետև մեջբերումների էջերը կտրվեն բնագրին կից):

ման 3-րդ կետը և Վահանի ընկալունակությունը շարժելու համար, թե ինչու՝ աստված ներեց Պողոսին, ճարտասանական հարցով ավարտում է իր խոսքը. «Եւ եթէ ընդէր այս այսպէս լինէր՝ ծանիցէ քննողն, թե կտրասցէ, ապա թէ ոչ՝ լռեսցէ» (409)։ Իրեն Պողոսի հետ համեմատելու այս աղջ հատվածի նպատակն է (ե դրա պատասխանը ամփոփված է պարբերության վերջում, հոգևորական հարցի մեջ) ցույց տալ, որ նախանձավորների զրպարտությունը մի այնպիսի ծանր մեղադրանք է, որ նույնիսկ Պողոսը չկարողացավ դեմ կանգնել գայթակղությանը, ուր մնաց ինքը՝ Ղուզարը, որ նրա մոտ մի չնչին մեծություն է։

«Թղթի» նախաշաղկի նպատակն է հոգեբանորեն ազդել ընթերցողի վրա։ Այդ նպատակով Փարպեցին դիմում է ճարտասանական մի շարք հնարանքների, որոնք լավագույնս լուսարանված են «Պիտոյից գրքի» համապատասխան բաժիններում։ Նա փորձում է իրար հետ համադրել (հետևելով «Պիտոյից գրքում» տրված բաղդատության ճարտասանական հնարանքի սահմանմանը) մի կողմից իր և Պողոս առաքյալի համանման շարժառիթներից բխած ակամա ինքնապաշտպանությունների փաստը, մյուս կողմից՝ Քրիստոսի և Վահանի, որպես առաջինների վարժանքները զնահատողների, ներողամտության առանձնաշնորհով օժտված լինելու հանգամանքը։ Եվ ի՞նչ առաջին դեպքում Քրիստոսը ներում է իր առաքյալին, ապա երկրորդում պահանջ է դրվում, որ Քրիստոսի պատկեր Վահանը հետևի իր նախօրինակին և ներողամտություն ցուցաբերի հանիրավի զրպարտվածի նկատմամբ. «...որպէս մեծ առաքեալն Պօղոս՝ այլ քո տեսան, քրիստոսանմանութեամբ տարեալ, զանզգամութիւնս իմում՝ ընկալ զիս իրրև զանզգամ» (410)։

«Պիտոյից գրքում» գրված է. «Բաղդատութիւն է յարագրական բան ընդդէմ՝ հարցաքննեալ միշտ առ մեծագոյնսն»։ Պարտ և արժան է բաղդատել, կամ զբարի ընդ բարիս յարարկանելով, և կամ զվատթար ընդ վատթարս. և կամ զմեծամեծս ընդ փոքունս, և կամ զփոքունս ընդ մեծամեծս։ Եւ բոլորովին բաղդատութիւն կրկին ներբողեան է և կամ պարսաւ։ Եւ ի բաղդատելն պարտ է նախաշաղկան վարել...»¹⁴։ Ղազարը գրեթե կետ առ կետ հետևել է այս հրահանգներին։ Առաջին, նա բաղդատությունը կատարում է հարագրելով «առ մեծագոյնսն», իրեն համեմատում է Պողոսի հետ, իսկ Վահանին՝ Քրիստոսի։ Երկրորդ, Պողոսի կատարած բարի գործը, որը նույնիսկ Քրիստոսի կողմից շնատապարտվեց, համեմատում է իր կատարած բարի գործի հետ՝ ներողամտ լինելու պահանջը տարածելով նաև Վահանի վրա։ Երրորդ, «մեծամեծի» Պողոսի արարքը համեմատում է իր՝ «փոքրի» արարքի հետ։ Չորրորդ, բաղդատության ընթացքում ներբողում է Պողոսին և նրա վարժանքը, հետևաբար և՛ իրենը, Հինգերորդ, այս համեմատության ընթացքում Պողոսի հաշտության արված գովքը հենց այն նախաշաղկիղն է, որով պարտ է... վարել բաղդատությունը։

Պողոս-Քրիստոս հարաբերությունը պարզելուց հետո Ղազարը անցնում է հակադրամիասնության մյուս թեմին՝ Ղազար-Վահան և այդ նպատակով օգտագործում է բուլղանդական և անտիկ նամակագրության փորձում ընդունված հակադրությունների բանաձևը։ Գրեթե պարտադիր կանոն էր, որ նամակագիրը շողորթոթ և կեղծավոր արտահայտություններով բարձրացնի հասցեատիրույթը և, ընդհակառակը, քրիստոնեական հնազանդության դիրքերից ելնելով, ամեն կերպ ձգտի նվաստացնելու ու հողին հավասարեցնելու սեփական անձը։ Այս կերպ է վարվում նաև Փարպեցին. «Արդ՝ դու, տէր, այլ քաղցր ես և խոնարհամիտ և արդարահայեաց և կշռաքնին, և հաւատոյ Աստուծոյ առաւել ընտանի, որպէս և ամենայն նախնիքն քու։ Եւ ես անպիտանս և ամենեցուն կղկղանք (Պողոսի խոսքերն են— Ա. Ա.), թէպէտ և երեւիցիմ առաջի տեսան, առն եղեալ որդի, իբրև զանզգամ...» (409—410)։ Այս առիթով Հ. Կոսկենենիսին գրում է, որ «բյուզանդական ոճում նամակագրի ցածրաստիճանությունը հասցեատիրոջ նկատմամբ օրենքի, կանոնի ուժ է ստանում՝ առանց հաշվի նստելու օրյակտիվ հարաբերությունների հետ»¹⁵։

Դեռ անտիկ թղթագրությունից եկած և միջնադարում ընդունված ավանդույթ է, որ նամակագիրը, նախքան բուն նյութին անցնելը, պետք է նախապես որոշի (թեկուզ և հենց իր սուրբ յեկտիվ մեկնաբանությամբ) և նամակի մեջ ցույց տա իր ու հասցեատիրոջ միջև գործող բարեկամական հարաբերությունների աստիճանը կամ բարեկամական կապի պարբերաշաղկը։ Ինչպես հայտնի է, անտիկ թղթի էությունը որոշող հիմնական հատկանիշը հենց բարեկամական հավաստիացումների շարունակական արժարժումն է։ Գուստավ Կարլսոնը գրում է. «Նամակն իր

¹⁴ «Մ ո վ ս է ս ի Խ ո Ր Ե Ն ա ց ո յ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 476։

¹⁵ H. Koskeniemi, Studien zur Idee und Phraseologie des griechischen Briefes bis 400 n. Chr., Helsinki, 1956, S. 96.

բնույթով սերտ կապի մեջ է մարդկային հարաբերություններում մշակված պայմանականությունների և քաղաքավարական կանոնների հետ: Այս է նամակի դիմավոր առարկան¹⁶:

Ղազարը «Թղթի» սկզբից մինչև վերջ ամեն կերպ ձգտում է մի քանի օրինակով և փաստերի հիշատակությամբով վահանին ցույց տալ (մանկության օրերին դեռ ինքը համակիր էր Վամսարականներին՝ Վահանի ազգակիցներին, որոնց մոտ ինքը պատսպարվում էր), հիշեցնել (••• դու յայց ելեալ խնդրել զիս, և դտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն...» (410), «...այլ սննդակիցք էաք ձեզ և խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր. սնուցանէ մայրն ձեր արհնեալ և Անուշ-Վռամ ըստ իւրեանց հողեսիրութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպես և զձեզ...» (411) իրենց բարեկամության փաստը, հավատարմացնել, որ ինքը միշտ պահել է սերը և բարեկամական դրացմունքը Վահանի նկատմամբ («Քանզի և կծկեալ, որպէս սաստիկ և պինդ կապով, քաղցր և ամենահեշտ քո տեառն ախորժակ սիրովս», — զորոյ եթէ դամ ճաշակեալ որո՞ւք առցէ զհամ անուշութեան կամէի մեռանել քան թէ յայսմանէ վրիպել», 435), երբեմն էլ՝ պաշտօնագրեր (համատեղ դաստիարակության համար «քեզ տեառն անկ էիք», «Իսկ ըստ առանելեալ շնորհիս, զոր ետ ինձ Քրիստոս, ապա արդարեւ քեզ իսկ և արժանիք» (411), «Եւ եմ ես այն Ղազար, ըստ առ ի քէն տեառնէ և այլոց բազմաց ասացածի, որում ոչ ոք գոյ Դիոխանակ» (412) իրենց նախկին բարեկամությունը վավերացնելու անհրաժեշտությունը և անձամբ իր կողմից պատրաստակամություն է հայտնում այդ առիթով: Լ. Լոնգերը գրում է. «Այդ դերակաշար բարեկամական, դրական տրամադրվածությունը և պահվածքը (միմյանց նկատմամբ) նամակագիրները կոչում են *dispositio* (լատ. *Dispositio*), որը նամակագրության անհրաժեշտ պայմանն է»¹⁷:

Անտիկ ճարտասան Թեոնը, որի գիրքը հայերեն է թարգմանվել V դարում, նամակը քննում է բարառություն բաժնի դիմառություն ենթաբաժնում. «Եւ ընդ այսու ես ընդ ազգի (դիմառությունը — Ա. Ա.) կրթութեանս անկանի և կացրդականաց բանիցս տեսակ եւ յորդորականացն և թղթականացն»¹⁸, ըթն նամակի այսօրինակ ըմբռնումը (նամակը որպես հոգու պատկեր) փորձենք կապել «Պիտոյից գրքի» համապատասխան հրահանգների հետ, ապա այն ավելի է համապատասխանում բարառության սահմանմանը. «Բարառություն է, ուրանօր դէմքն ծանօթք են, իսկ բարս ստեղծանեմք»¹⁹, այսինքն՝ հայտնի դեմքերին (անձերին, առարկաներին) մենք վերագրում ենք հատկանիշներ, որոնք մակաբերվում են առաջիններից: Բայց այս հարցում կա մի նրբություն: Երբ անտիկ կամ բյուզանդական նամակագիրները և նամակի տեսաբանները պնդում էին, թե նամակը մարդու հոգու պատկերն է, ապա սա պետք է հասկանալ մի վերապահումով: Թանի որ բարեկամական հավաստիացումները կարեւորագույնն էին համարվում նամակում, ապա, բնականաբար, նամակագիրը իրեն ամեն անգամ դնում էր հասցեատիրոջ տեղը և նրա բարյացակամությունը իր կողմը գրավելու համար դիմում բազմաթիվ շողորորթ, կեղծ բարեկամական հավաստիացումների օգնությամբ: Այնպես որ նամակն իրականում դառնում էր ոչ թե նամակագրի իրական, այլ իդեալական հոգու պատկերը: Այս իմաստով նամակը պետք է քննել «Պիտոյից գրքում» արտահայտված ոչ թե բարառության, այլ դիմառության ընդհանուր սահմանման համակարգում. «Եւ դիմառություն, ուրանօր գրարսն՝ միանգամայն և զղէմսն ստեղծանեմք»²⁰, այսինքն՝ հորինվում են և՛ դեմքերը, և՛ միաժամանակ հատկանիշները: Փարպեցու «Թղթի» առընչությամբ գործ ունենք սեփական հոգու սուբյեկտիվ պատկերման հետ: Միայն այս իմաստով է, որ խոսք կարող է լինել «նամակը որպես հոգու պատկեր» սահմանման առանձնահատկության մասին: Սա մանավանդ վերաբերում է բյուզանդական նամակագրական փորձին, որի կեղծները ողային ոգու տեսանկյունից առավել ցցուն է դառնում սուբյեկտիվ հոգու պատկերը սահմանման իրական իմաստը: Թեև Փարպեցին ուղղակի ակնարկ չունի այն մասին, որ ինքը ծանոթ է նամակագրական վերոհիշյալ պահանջին, բայց և այնպես նրա «Թղթի» ողջ տրամադրվածությունը, միտումը մեզ հիմք են տալիս հաշվի նստել այդ փաստի հետ: «Թղթի» նպատակն է ներկայացնել Փարպեցու՝ որպես նամակագրի, մեծ և առաքինի հոգու պատկերը և դրա մի-

¹⁶ G. Karlsson, *Ideologie et ceremoniel dans l'epistolographie byzantine*, Uppsala, 1959, p. 15.

¹⁷ H. Hunger, *Die hochsprachliche . . .*, s. 220.

¹⁸ «Թ ի ղ ն ե ա յ, Յաղագս ճարտասանական կրթութեանց», Երևան, 1938, էջ 122—123:

¹⁹ «Մ ո վ ս է ս ի և ո ռ ե ն ա ջ ո յ մատենագրությունք», էջ 510:

²⁰ Նույն տեղում:

շոցով զանց առնել կոնկրետ մեղադրանքները՝ Որ իրոք Փարպեցին այդպիսի նպատակ է հետապնդել, վկայված է Քղթի անանուն հեղինակի դրած առաջաբանում. «Եւ ինչպիսիք այս ամենայն Ղազարոս՝ իբրև քաջ պատերազմող զինեալ զինքն, զի բանիւ զօրութեան զիւր ռզույն և զքաջալեւոթեան և պատկեր կերպարանաց ի ձեռն դրոյ Քղթոյս այսոցիկ ծանուցէ նոցա, զվաստակ բանի իւրոյ որ առ նոսա յառաջագոյն լուսափայլեալ, զի կարճեցին բերանը շարախօսացն զնմանս (ընդգծումը՝ Ա. Ա. 407)»։ Քղթի առաջաբանի հեղինակը մի քանի այլ հետաքրքրական տեղեկություններ էլ է հայտնում Ղազարի Քղթի վերաբերյալ, որոնցից պարզ է դառնում, որ, իրոք, Փարպեցին ծանոթ է եղել նաև այլ նամակագրական իրողությունների՝ ճույց տալու համար, թե որքան մեծ համոզականություն և խոսքի արժանահավատություն ունի Ղազարի Քղթը, խիստ ինքնատիպորեն զնահատելով այդ հանգամանքը, առաջաբանի հեղինակը գրում է. «Վասն որոյ և զերրորդ Պատմութիւնս Հայոց գրեց Ղազարը։ Ընդ նմին գրեցաք և զթուղթս, զի ընթերցասէրքն զպատմութիւնս կարգալով, ընդ նմին և զթուղթս ընթերցեալ՝ զփորձ առցեն նորա լաւութեան բանինս (408)», այսինքն՝ խոսքի արժանաւորությունը ընկալին այս թղթի միջոցով։ Հասկանալի է, որ Քղթի համոզականությունը հասնելու համար Ղազարի գործադրած հնարանքները այլ բան չեն, քան ճարտասանական և նամակագրական հարուստ իմացություններ, առանց որոնց հնարավոր չէր հասնել դրան։

Առաջաբանի հեղինակի մի ակնարկից հասկացվում է, թե ինչպիսի վստահությամբ է Ղազարը հավատացել, որ իր այս Քղթի միջոցով կկարողանա զանց առնել բոլոր մեղադրանքները և հասնել համոզականության. «Եւ մանավանդ զի վստահ եղեալ յամենիմաստ մարդպանն, եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել շտող և գիտել զիրաւունս, զի անմեղադրելի զԵՆԸ առասցէ ձեռն գրուս» (ընդգծումը՝ Ա. Ա., 408)։

Վերջապես առաջաբանի հեղինակի մի արտահայտությունը՝ «եմ անեալ ի ձեռն զզէն գիտութեան, զի յաղթող երևեսցիս (408)», հիշեցնում է բյուզանդական թղթագրության մեջ ընդունված նամակագրական մրցության երևույթի մասին, երբ հեղինակները ձգտում էին նամակագրական կանոնների իմացությամբ գերազանցել մեկը մյուսին, ցուցադրել իրենց խորագիտությունն ու աստվածաշնորհ վարպետությունը։

Նախքան իր հասցեին արված բուն մեղադրանքների հերքմանն անցնելը, Ղազար Փարպեցին ցույց է տալիս, թե դեռ արարադրածության ժամանակներից սկսած ինչպիսի անարդարություններ են կատարվել աշխարհիս երեսին նախանձի ու բանասարկության սպասավորների նետերից։ Մեջբերելով Քրիստոսի, որպես նախանձի զոհի, պատմությունը, Ղազարը ճարպկորեն մի թաքուն զուգահեռ է անցկացնում մի կողմից Քրիստոսի և իր, մյուս կողմից՝ Պիղատոսի և վահանի միջև։ Նա գրում է. «...որ ծանուցեալ Պիղատոսի, ըստ վկայութեան աւետարանչին, թէ «առ նախանձու մտանեցին զնա», լուսեցալ զձեռս՝ ասէ. «Անպարտ եմ ես չարենէ առնդ, զի ոչ ինչ գտի ի դմ վնաս արժանի մահու. դուք առէք, ասէ, և ըստ ձերոց օրինաց դատեցարուք» (413)։ Զուգահեռ ակնհայտորեն խիստ ազդեցիկ է, որից անմիջապես բխում է հետոտրական հարցը. Պիղատոսը ձեռքերը լվաց, իսկ վահանը՝ Միակ պատասխանը, որ կարող է տալ վահանը՝ Պիղատոսը սինակին չհետևել է։ Փարպեցին աստիճանաբար թանձրացնում է գույները և կամաց-կամաց վահանին «առնում է իր բռան մեջ», որտեղից նա այլևս փախչելու տեղ չունի, որովհետև նրա քննահանգիման կանգնած է Քրիստոսի թափված անմեղ արյան փաստը, և որպես ազնիվ քրիստոնյա (ինչպես ամեն շանք թափելով ձգտում է նրան ներկայացնել Ղազարը) պետք է դատապարտի Պիղատոսի վարմունքը, հետևաբար Քրիստոսի հետ միասին արդարացի են և իրեն։ Այնուհետև Փարպեցին անմիջապես անցնում է իր վրա զրված մեղադրանքների հերքմանը։ Քղթի գրեթե բոլոր ուսումնասիրողներն էլ նկատել են այն երևույթը, որ հակառակ ճարտասանության պահանջներին՝ Փարպեցին զորեղ փաստարկներից զնում է զեպի թույլերը և երկրորդականները։ Գր. Խալաթյանը գրում է. «փաստարկները «ոչ ի տկարագուծից սկսեալ ի վերուստ» ի զօրաւորսն իշանին ըստ օրինակի հետոտրական ճառից»²¹։ Այս փորձում է պատճառաբանել, թե ինչու է Ղազարը այդպես վարվում։ Նա ի տարբերություն այլ ուսումնասիրողների (Մ. Արեգյան, Զ. Հարությունյան) ընդգծում է, որ այդ նորարարական սկզբունքը գործում է՝ սկսած հեքստմների երկրորդ կետից՝ Ղազարը «ազանդաւոր է»։ Խալաթյանը սա պատճառաբանում է հետևյալ կերպ. «Երբ զրեւն իւր զթուղթ՝ Ղազար ամենուրեք հռչակեալ, ամենեցունց ատելի և վնասակար իմն էր անձն. ազանդաւոր էր նա...»²²։ Նաև մարդպանն էր այդ կարծիքին, այդ իսկ պատճառով էլ

21 Գր. Խալաթյան, նշվ. աշխ., էջ 37։

22 Նույն տեղում։

նա ղիտավորյալ առաջինը չի դնում ամենածանր՝ «աղանդաւոր է», մեղադրանքի հերքումը. «ի մեզ՝ տազնուպի էր Ղազար յանձին իւրում, զի մի գուցե և Թուղթ իւր ոչ ընթերցանեցի, որպէս բանից իւրոց յաջան դնել ունին. զի մի գուցե ընկալեալ Վահանայ ղԹուղթն՝ անտէս առնիցէ՝ սուրն, Անդին իսկ ի սկզբան Բիւրճն կամէր Ղազար յինքն գրաւել զուշ Մարգարանին. ահա առիկ ոյր վտոն սուտայինն ի լանստիկութեանց զանհեթեթի դնէր»²³։ Խալաթիւնը իրավացի է, եւր, որչափ է, թէ Ղազարի հասցեին արված մեղադրանքներից առաջինը՝ «Ղազար ասէ, թէ ոյտնկութիւն մեղը շեն», ինքնին ամենաթույլն է ներկայացված մեղադրանքների շարքում։ Իսկայն մեր կարծիքով, երբ այն կապվում է Վահանի անվան հետ (զոտոյն և մարգարանին սաղարէն), աւելու դառնում է ամենածանր մեղադրանքը։

Նամակադրական իրոքում կանոնիկ էր դարձել նախաշավղից անմիջապէս հետո տեղ հատկացնել խնդրոտ տոարկային, Այս պահանջը առավելապէս դրվում էր պաշտոնական նամակադրութեան վրա²⁴։ Խնդրադրութիւն կոչվող նամակագրական միավորը նպատակ է հետապնդում ներկայացնել խնդրի պորձնական և փաստական դրվածքը։ Բայց փարպեցին, ելնելով նամակային յուրահատուկ իրադրութեան պիտանքից, խնդրադրութիւնը միանգամից չի կատարում, մերկաւորարանից և ուղղակի չի դնում հարցը, որովհետեւ գիտակցում է, որ հարցի ուղղակի դրվածքը կարող է Վահանին ետ պահել, վտանգ ընթերցանութիւնից։ Այս նպատակով Ղազարը իր «Թուղթը» թուրքարեւում է նամակագրական և ճարտասանական տեխնիկական մի շարք միավորների։ Մինչև իրոք խնդրադրման անցնելը, որը նամակի ամբողջ ընթացքում աչքից էլ ինքնուրույն և անկախ արտահայտութիւն չի պետք, Ղազարը երկարաձիգ նախապատրաստական վարժութիւններ է կատարում՝ մեղտեղից վերացնելու համար մեղադրանքների ուղղակի ներկայացումը։ Նա հանդիմանում է Վահանին, որ վերջինս զրպարտիչների խոսքերն ունկնդրելով՝ շուտափութով լծիւ է կայացնում, բայց հարկ է, որ նա մանրակրկիտ ըննութիւն կատարի և համոզվի, թէ որն է արդարը և որը՝ անարդարը։ Ղազարը պահանջ է դնում Վահանի առաջ՝ «առաջօք» տեսնել, համոզվել և նոր որոշում կայացնել։ «Բայց ես և այլ նոր իմն բանս ասեմ տեառող, զոր եթէ իրոցի արդարախնդիր մտացո՞ւ նախ բան զամենայն աղաւնի դտէրդ՝ քննել զայդ. յորոյ ճշգրտի՜ հասնալ ի վերայ՝ կամ զարմասիր և կամ խոտեալ իրրեւ դոչ արդար՝ անգոսնեայիր» (424)։ Ղազարը Վահանին կարծես հիշեցնում է 484 թվականին պարսից Վաղարշ Բագուվորի հետ կնքած Նվարսակի պայմանագրի 3-րդ կետի այն նույն պահանջը, որը հենց իր ձևով գրել և Վաղարշին էր ուղարկել Վահանը։ Նա, զգուշացնելով Վաղարշին, որ չհետևի Պերոզի օրինակին և արդարախոհ լինի ամեն հարցում, ճանաչի իր հպատակներին և կարողանա զրպարտութիւնը տարբերել իրերի փաստացի դրութիւնից, գրում է. «Եւ երրորդ խնդիր մեր այս է. որ տիրն է Արեաց և աշխարհի թագաւոր՝ կամիմք, զի ինքն տեսցէ իւրով աշօք, և ինքն լուիցէ իւրով ալանջօք, և ինքն պիտասցէ և ինքն խօսեսցի իւրով բերանով. և մի այլոց աշօք տեսցէ և այլոյ կանջօք լուիցէ և այլովք հանապազ գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և այլոյ բերանով խօսեսցի զպլտան։ Յաղագս որոյ չլինի ուղիղ հայեցումն, և ոչ արդար լսողութիւնն. այլ յոյով սուա խօսքն ճանաչին և հրամանքն ընդունայնք, և բնաւ այլ ընդ այլոյ լինի՝ կործանեալ ամենայն վաստակը՝ ծառայիւրն կորնչին, և ոչ կարէ կալ աշխարհ և ի նմա բնականը անշարժ և հաստատուն...» (ընդգծումը՝ Ա. Ա., 355—356)։ Այս տողերում, սակայն, զգացվում են Փարպեցու գրչի խաղերը՝ նա Վահանին հավաստեցնում է, որ անձամբ ինքը երբեք լսածներով դատողութիւններ չի անում մարդկանց մասին, այլ նախընտրում է փորձով համոզվել։ «Բայց ես թէ և գիտի զոր յայնպիսեացն (աղանդավորներից — Ա. Ա.)՝ ընդ լրոյ դատել զոր՝ և կաս պարտաւորել ամենեւիմք ոչ կամէի. վասն որոյ կարծիւն շարաթոյնքն, թէ և ես նմանիցիմ նոցա։ Քանզի ուսեալ էի. ի Փրկչին, որ ոչ հրամայէ ամենեցունց՝ յոխորտ խել զորումն ի ցորենոյն մինչև ի ժամանակ հնձոցն, և առաքել զհրեշտակս իւր ի ժամանակի հնձոցն...» (420—421)։

Պաշտոնական գրադրութիւններում խիստ գործածական այնպիսի մի միավոր, ինչպիսին է «պատմի սպառնալիքը», զործառված է նաև Փարպեցու «Թղթում»։ Նամակագրական այս միավորը բաշտանում է նաև Խորենացուն, Աղաթանգեղոսին, Եղիշին։ Փարպեցու «Թղթում» «պատմի

²³ Նույն տեղում։

²⁴ Fr. Dölger und J. Karayannopoulos, Byzantinische Urkundenlehre, «Die Kaiserurkunden», Handbuch der Altertum-Wissenschaft, I Bd., I Abschnitt, München, 1968, S. 48.

սպառնալիքին միավորը, ի հակադրություն իրական տույժի վկայակոչման, քրիստոնեական հնազանդության և ներողամտության դիրքերից ելնելով կերպարի ստեղծման է համընդհանուր մտա- ղախության մի խորհրդանիշի մեջ. «Յաղագս որոյ երկնչիմ զարհուրեալ, մի դուց է և ի դոսս (յորպարտիչների վրա— Ա. Ա.) յարիցեն Աւետարանին սպառնալիքն, որ ասէ...» (438): «Պատ- լի սպառնալիքին այս անուշակի սրտահայտությունը հետևանք է թեղթումն ասկա քարոզային այն ենթոյութի, որը մշտապես թափանցում է տեքստի մեջ և քրիստոնեական դույն տալիս նամակի ողջ կերպարանքին: Այդ նույն քրիստոնեական հնազանդության և ներողամտության դիրքերից էլ (դեպի իր անձը շրջված պատմի սպառնալիքի առնչությամբ) Ղազարը երկարաձգում է նամակագրական վերոհիշյալ միավորը. «Համարձակիմ ասել ի սոյնս յանդգնութեամբ և դայս ևս...» և թէ՛ ոչ իցեն ստոյգ կարծեցեալքս յինէն, դու տէր քաղցրութեամբ զանց արարեալ՝ նե- րեսչիր ինձ սրպէս տկարամտի...» (439):

Ղազարը իր «Թուղթը» ավարտում է նամակագրական մի այլ միավորի գործադրումով, որը բնորոշված է դրականության մեջ կոչել ամբողջում, որը Ֆրանց Դյուգերը սահմանում է որպես «նամակային բուն սեքստի վերջում դրվող ձևական մի նախադասություն, որը միջոց է ծառայում փաստաթղթի ամբողջման (վավերացման, հաստատման) համար»²⁵, Ղազարը կարծես իրեն և բնթերցողին ձգտում է հավաստիացնել, վստահեցնել, որ վերջիվերջո հշտարտությունը կհաղ- թանակի և կհաստատի իր անմեղությունը. «Իսկ վերին արդարատես ակնարկումն չհայի ի չար կամացն խնդիրս, այլ իւր խնամակալութեանն յաջողութեամբ՝ կատարէ հանապազ անփոփոխու- թեամբ ի բարիս, ի փառաւորութիւն անուան իւրոյ սրբոյ, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն» (439):

Ղ. Փարպեցու «Առ Վահան Մամիկոնեան» գրած թուղթը իր պատմամշակութային, դեղագի- տական արժանիքներով, հույժբանական միտվածությամբ V դարի հայ գրականության ամենա- հարադատ ծնունդն է, թեղթումն արտահայտություն է գտել դարի հայկական կյանքին բնորոշ և հասարակական-քաղաքական և կենցաղավարական մթնոլորտը, ուր ապրել և ստեղծագործել է Ղ. Փարպեցին: Միաժամանակ, լինելով գրական-գեղարվեստական նամակի առաջին կիրա- ւողը հայ մշակույթի պատմության մեջ, Փարպեցին, բնականաբար, չէր կարող չօգտվել հաբեան ժողովուրդների մեջ մշակված նամակագրական ավանդույթներից ու փորձից: «Թեղթումն խիստ նրբորեն ու ճաշակով իրար հետ համադրված են հայրենի, անտիկ և համաքրիստոնեական (մեր- ձավորաբեկյան) նամակագրության, ինչպես նաև անտիկ մշակույթից հայ իրականությունը ներ- թափանցած ճարտասանական դիտելիքների ամբողջությունը մի համակարգի ձևով, որը խստա- գունյն ծառայեցված է հեղինակի կողմից իր նպատակին հասնելու խնդրին: Փարպեցին իր «Թուղթը» այնպես է կառուցում, որ կարողանա հասնել առավելագույն ազդեցության, այդ նպատակով այն հեղեղում է ճարտասանական բազմաթիվ հնարաններով ու արտահայտամե- ղեցներով՝ միաժամանակ պահպանելով նամակագրության տեսական կանոնները և ձգտելով դրանք նույնպես ծառայեցնել իր նպատակին: Ապացուցել իր հասցեին արված ամբաստանությունների անարդարությունը՝ այս է գլխավոր խնդիրը, որի իրականացմանը Փարպեցին ձեռնամուխ է լինում մի շտեմնված ջանագրությամբ՝ և ի հայտ բերում իր ամբարած դիտելիքների ողջ բազ- մազանությունն ու հարստությունը, նամակագրական և ճարտասանական իրողությունների խորի- մացությունը:

Փարպեցու հետաքրքրությունը ճարտասանության և նամակագրական տեխնիկայի նկատ- մամբ պատահականության սրդյունք չէր և ուներ իր հիմնավորումները: Նախ դա բխում էր «Թեղթի» ողջ ապացուցական ոգուց և երկրորդ՝ հետևանք էր պատմամշակութային մի կարևորա- գույն իրողության. IV դարի երկրորդ կեսից սկսած համաքրիստոնեական ողջ մշակույթում (որը մինչ այդ ենթարկված էր քարոզի մոգական ազդեցությանը) կատարվում է մի կտրուկ շրջա- փարձ դեպի անտիկ ճարտասանությունը, որը հիմնականում քարոզի տարրերը դուրս մղեց նամակագրության ոլորտից: Այս շարժումը հատկապես կապված է երեք կապաղովկիացիների (Բարսեղ Լեոսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի) անվան հետ, որոնց զրվածք- ներին քաջատեղյակ էր Ղազար Փարպեցին:

ПРОИЗВЕДЕНИЕ ЛАЗАРЯ ПАРБЕЦИ
«ПОСЛАНИЕ ВАГАНУ МАМИКОНЯНУ» В СВЕТЕ
СРЕДНЕВЕКОВОЙ ЭПИСТОЛОГРАФИИ

АШОТ АЛЕКСАНЯН

Р е з ю м е

В произведении Лазаря Парбечи «Послание Вагану Мамиконяну» отразилась та общественно-политическая атмосфера, в которой жил и творил Парбечи. Лазарь Парбечи опирался на традиции и опыт эпистолографии, накопленный другими народами.

В этом произведении сопоставляются принципы отечественной, античной и общехристианской (ближневосточной) эпистолографии. В нем отражена также совокупность проникших из античной культуры риторических знаний, подчиненных единой цели—опровержению предъявляемых автору «Послания...» обвинений.